



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA



Խմբակցություն

25 հունիսի 2008

ԺԽ-0251/08

Պարոն Սամվել Նիկոյանին
2008թ. մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած
իրադարձությունների եւ դրանց պատճառների ուսումնասիրության
ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ
Երեւան, Հայաստանի Հանրապետություն

Հարգարժան պարոն Նիկոյան,

Ի պատասխան Ձեր 2008թ. հունիսի 19-ի գրության եւ 2008թ. մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ու դրանց պատճառների ուսումնասիրության ԱԺ ժամանակավոր հանձնաժողովում «Ժառանգություն» խմբակցության նոր ներկայացուցիչներ առաջադրելու Ձեր ակնկալիքին՝ ուզում ենք հիշեցնել, որ վերոնշյալ հանձնաժողովը, ավաղ, ձեւավորվեց առանց փոխզիջումների եւ մասնավորապես «Ժառանգություն» խմբակցության երեք այլընտրանքային առաջարկները հաշվի առնելու: Հիշեցնենք, որ դրանք վերաբերում էին հանձնաժողովում ընդդիմադիր (խորհրդարանական եւ արտախորհրդարանական) եւ կոալիցիան ներկայացնող քաղաքական ուժերի հավասար ներկայացվածությանը, որոշումների ընդունման ժամանակ կոնսենսուսի կիրառմանը, հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն այնպես, որ նա կարողանար իրական, անաչառ ու բազմակողմանի հետաքննություն պատվիրակել ու այդ նպատակով ստեղծել մարմիններ:

Եւ գլխավոր քարտուղարի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Թոմաս Համներբերգի՝ վերջերս Երեւան կատարած այցելությունից ու խորհրդարանական խմբակցությունների հետ նրա հանդիպումներից հետո թե նրա, թե նաեւ հանձնաժողովի տարբեր անդամների կողմից հայտարարություններ հնչեցին հանձնաժողովի կողմից վերոնշյալ մոտեցումներից որոշները ընդունելու կապակցությամբ: Սակայն առ այսօր դրանք մնում են հայտարարությունների մակարդակով՝ չամրագրված ԱԺ որոշման, հանձնաժողովի կանոնադրության մեջ: Մեր հնարավոր մասնակցության հարցը քննարկելու առումով ակնկալում ենք ստանալ հետեւյալ հարցերի պատասխանները.

1. Արդյո՞ք հանձնաժողովը բոլոր հարցերով որոշումներ կայացնելիս պատրաստվում է առաջնորդվել «խիստ կոնսենսուսի» սկզբունքով, ինչպես բանավոր հայտարարվել է: Եթե այո՝ ապա պատրաստվո՞ւմ եք դա գրավոր ամրագրել որեւէ կերպ:

2. Թոմաս Չանմերբերգը առաջարկել է հանձնաժողովի փաստահավաք գործառույթը տարանջատել հետաքննական գործառույթից: Այդ փաստահավաք մարմինը կազմավորվելու՞ է հանձնաժողովի որոշմամբ, որոշման ի՞նչ մեխանիզմով: Աժ ներկայիս որոշումը թու՞յլ տալիս է նման մարմին ձևավորել: Եթե ոչ՝ պատրաստվու՞մ եք փոփոխություններ կատարել Աժ որոշման մեջ:
3. Չանձնաժողովի տարբեր անդամների կողմից հայտարարություններ են հնչել, թե հանձնաժողովն իրենով չի փոխարինում մարտի 1-ի իրադարձությունները քննող նախաքննության մարմնին: Այդ դեպքում ինչպե՞ս է հանձնաժողովն իրականացնելու այլընտրանքային հետաքննություն: Ինչպե՞ս են տարանջատելու հանձնաժողովի փաստահավաք եւ հետաքննական գործառույթներն ու այն որեւէ ձեւով ամրագրվելու՞ է հանձնաժողովի կանոնադրության կամ Աժ որոշման մեջ:

Կանխավ շնորհակալությամբ եւ հարգանք՝



Ստեփան Սաֆարյան
Խմբակցության քարտուղար